

- 7. Գաւթի եւ ժամատուն Հայոց հնագոյն եկեղեցիներու մէջ: ԱԶԳԱԳՐ. ՀԱՆԴ. ԻԱ. (1911), 5—33:
- 8. Հայ ճարտարապետութեան շրջանները: ԱՆԱՀԻՏ (Պարիս), 1911, 1—24:
- 9. Նորագոյն կարծիքներ Հայ ճարտարապետութեան ժամանակ: ԱՆԱՀԻՏ, 1911, 197—220:
- 10. Պատմական Հայ ճարտարապետութիւն. ուսումնասիրութիւն, Ա.: — Տեկորի տաճարը, 35 նկարով: Տփղիս 1911, 8⁰, էջ 106:
- 11. Ո՞րն է իսկական Հոսոմոսի վանքը. հնագիտական ուսումնասիրութիւն: Աղեքսանդրապոլ, 1911, 8⁰, էջ 16:
- 12. Անի քաղաքի թէ՛ ամրոց: ԱԶԳԱԳՐ. ՀԱՆԴ. ԻԲ. (1912), 61—84: ԻԳ. (1912), 5—26:
- 13. Ուսումնասիրելի նիւթեր Հայ ճարտարապետութեան համար: ԱԶԳԱԳՐ. ՀԱՆԴ. ԻԲ. (1912), 113—116:
- 14. Նախաքրիստոնէական Հայ ճարտարապետութիւն: ԲԱՆԻՆԵՐ (Վաղարշապատ), 1921/22, 207—225:
- 15. Նախաքրիստոնէական Հայ ճարտարապետութիւն: ՁՈՒԱՐԹՆՈՑ (Պարիս), 1929, 89—90, 124—126, 230—232, 319—325:
- 17. Երանանիւթերն ու նրանց գործածութեան կերպը հին Հայաստանում: Երեւան 1932, 8⁰, էջ 40:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



Oeuvres de GEORGES SINANIAN, Op. 18—23, Violon et Piano. Editions Féret-Marcotte, Paris 1933.

Պարիսահայ ծանօթ ջութակահար Պր. Գեորգ Սինանեան, որ իր ճպտտին հմայքովն ու նուագահանդէսներով ճանչցուած էր իրրեւ «քաջ նուագածու» (virtuose), ներկայիս կը հրատարակէ ջութակի համար՝ դաշնակի ընկերակցութեամբ վեց կտոր երկ, յայտնուելով այսու նաեւ իրրեւ յաջող երգահան: Երկտասարդ ջութակահարը, որ իր երաժիշտ գերգաստանին կարկառուն դէմքերէն մէկը կը խոտանայ դասնալ, խնամեալ դաստիարակութիւն մը առած ըլլալով՝ կանուխէն յայտնարեւած է իր մէջ նա՛ եւ ստեղծագործութեան տաղանդը, որ իր հաստատութիւնը կը գտնէ ներկայ նոր հրատարակութիւններուն մէջ: Թէ՛ եւ հայկական ոեւէ դրոշմ չեն կրեր անոնք, սակայն իրենց զո՛ւտ եւրոպական, եւ այն՝ արդիական (moderne) երաժշտութեան տարազին մէջն իսկ՝ հայու մը հոգւոյն խա՛նդն ու կորոզն է, զոր կ'արտայայտեն: Անոնց առաջին դնահատողներն եղած են Փրանսացի յայտնի երաժշտագէտներ՝ Prof. Firmin Touche Պարիսի Պետական Երաժշտանոցի, Prof.

Maurice Hayot, «L'Ecole Normale» երաժշտական դպրոցին վարիչները, աշխարհահռչակ ջութակահար Jacques Thibaud եւ այլք:

Առաջին երկը՝ Feuille d'Album (Op. 18), նուիրած է իր հօր՝ Պր. Անտոն Սինանեանի:

Երկրորդը՝ Allegro Appassionato (Op. 19) ձօնուած է Firmin Touche յիշեալ Պրոֆէսորին:

Երրորդը՝ Mouvement Perpétuel (Op. 20), նուիրուած է René Bénédicti ջութակահարին:

Չորրորդը՝ Impression (Op. 21), նուիրուած է L'Ecole Normale-ի պրոֆէսոր Maurice Hayot-ի:

Հինգերորդը՝ Chant Elégiaque (Op. 22), կը ձօնէ իր հօրեղբոր՝ երգահան Յարութիւն Սինանեանի, որմէ առած է իր երաժշտական նախնական կրթութիւնը, եւ

Վեցերորդը՝ Habanera (Op. 23), Փրանսացի երեւելի ջութակահար Jacques Thibaud-ի:

Այս վեց երկերու մէջ Սինանեան կը յայտնուի եւրոպացի արդիական երգահանի մը յատկութիւններով. եւ իրը այսպիսի նորութիւն մըն է մեր մէջ: Ան դիտցած է զնել իր գործերուն մէջ երաժշտագիտական ամէն նրբութիւն ու անոնց կազմուածքին մէջ բարձր արուեստ (technique) մը, որ յայտնի կը տեսնուի մանաւանդ Op. 20ի եւ 23ի մէջ (Perpetuum mobile եւ Habanera), եւ այս տեսակէտէ վիճակուած են անոնք միա՛յն «վերտիկալ» ջութակահարներու երգացանկին (répertoire):

Որքան ալ անկախ կարելի է նկատել ջութակի մասերը, սակայն անոնք կատարելութեան լրումը կը գտնեն իրենց դաշնակի ընկերակցութեան մէջ, որ նոյնպէս յաջողութեամբ պատկուած է: Կը շեշտենք, վասն զի դաշնաւորման մասն ալ շատ մը նորութիւններ կ'ընծայէ, որոնց մէջ կը տեսնուի երկտասարդ ջութակահարին՝ երաժշտութեան տեսականին (harmonie) վրայ եւս ունեցած հմտութիւնն ու քաջաւարտութիւնը: Երկու տողով մասնականօրէն արտայայտուինք: Ութեակ ձայնաչարի մը վրայ հիմնուած եօթ «ակկորդ»ները կը գործածէ անխտիր՝ իրենց բոլոր շրջումներով ու եղանակաւորումներով (altération, modulation, enharmonie եւն). ասոնց պարզ հետեւանքով խճողուած են հոն բխու-

ներն ու դիէզները, եւ մէն մի ամանակ՝ դաշնաւորման նո՛ր կերպ, նո՛ր երանդ եւ հետեւաբար նո՛ր հրապոյր կ'արտայայտէ: Դաշնաւորման այս յարափոփոխ եղանակի ընտրութեան մէջ տեղ տեղ նոյն իսկ չափազանցած կ'երեւի, ինչ որ սակայն կ'արդարանայ այնու, թէ ազատ խորհող արուեստագէտը՝ կարող է արուեստի պահանջին համաձայն օրէնքներու սահմաններէն շեղումներ գործել, ինչպէս սովոր էր ինքնիր մասին արտայայտուել՝ Համերգի (symphonie) հայր՝ մեծանուն Հայդըն: Ակկորդներու այդ յարափոփոխութիւնն (chromatisme) ու կշռութային (rythmique) բարդ կազմուածքը՝ գլխաւոր յատկութիւններն են դաշնակի մասերուն, որոնք դերձ չեն նմանապէս նրբութիւններէ ու կը կազմեն երգերուն ներքին ու արտաքին արժէքը:

Կրնանք յուսալ թէ Պր. Սինանեան ինչպէս Եւրոպացի լուսաւոր կենդրոնի մը Պետական Երաժշտանոցէն՝ ջութակի առաջնութեան մրցանիշը կրցաւ խլել (1928 ի Պարիս), պիտի կարենայ նոյնպէս եւրոպական երգահանութեան սահմանին մէջ ալ՝ իրեն եւ իր արդին արժանաւայելի դերք մը գրաւել, եթէ շարունակէ նոյն ոճով արտադրելու եւ ուրիշ հեղինակութիւններ:

Բայց այսու չենք բողձար, որ Պր. Սինանեան նուիրելով ինք դինք եւրոպական երաժշտութեան, անտեսէ ազգայինը: Ընդհակառակն՝ կը մտախնայ, որ իր երաժշտական գործունէութեան մէջ առանձին ուշադրութիւն դարձնէ ազգային երաժշտութեան, որ հայ արուեստագէտի մը սրբազան պարտքն ըլլալու է միշտ: Եւ արդէն ուրախութեամբ կը լսենք, որ ներկայիս կ'աշխատի ա՛յն հայ դեղձուկ երգերու դաշնաւորման վրայ, որոնք կը գտնուին Կոմիտաս Վարդապետի դեռ անտիպ Հաւաքածոյին մէջ եւ մինչեւ օրս ո՛չ Կոմիտասէն, ո՛չ ալ ուրիշ մը դաշնաւորուած են: Այդ գեղջուկ երգերէն 20էն աւելի՝ արդէն պատրաստ՝ կը սպասեն տպագրութեան, որոնց շուտով պիտի յաջորդեն ուրիշ երգեր ալ: Պր. Սինանեանի՝ ազգային երաժշտութեան հանդէպ ցոյց տուած այս գուրգուրանքն զովելի է, իսկ իր ձեռնարկը արժանի ամէն նիւթական թէ բարոյական քաջաւերանքի:

Ջերմօրէն կը շնորհակարանք տաղանդաւոր ջութակահար-երգահանը՝ իր թէ՛ հրատարակած եւ թէ՛ հրատարակելի գործերուն

համար, որոնց հանդէպ յուսով ենք թէ օտարներէն յառաջ՝ հա՛յ հասարակութիւնը ջերմ վերաբերմունք պիտի ցուցնէ:

Հ. ԳՐԻԳՈՐ ՀԵՊՈՅԵԱՆ

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ, «Եկայի Հաւատացեալք», 6մայ 1933 մը Հայ Եկեղեցւոյ Սրբազան Երաժշտութեան, Երոպական ճալագրութեամբ, Խանդերձ մասնագիտական ուսումնասիրութեամբ: (Արտատպութիւն «Բագմալեպէ»): Վեներիկ, Ս. Ղազար, 1933:

Երաժշտագէտ Հ. Տայեան՝ իր անդրանիկ ու շահեկան երկն է զոր կը հանէ հրապարակ: Երկայն տարիներէ ի վեր ուսումնասիրող մը ըլլալով՝ Հայ Եկեղեցական Երաժշտութեան՝ անոր մէջ նշմարած է եղական յատկութիւն մը — որ կը պակաս արեւմտեան երաժշտութեան — եւ այդ հիման վրայ՝ կը հիմնէ «Քառորդ ձայներու» նոր դրութիւն մը: Այս նոր դրութեամբ ձայնագրած է ամբողջ Շարակնոցը եւրոպական խաղաղութեամբ, որուն «Նախախաղախի» է ներկայ հրատարակութիւնը:

«Եկայի» կազմուած 12 մեծաղբէր էջերէ, ձայնագրուած է միաձայն՝ երգի կամ ջութակի համար, ուր կիրարկուած են — ըստ նոր դրութեան — 1/4 եւ 3/4 քառորդ ձայներն յատկանշող նշաններ, որոնց առանձին ձեւ ու անուն տրուած է (Monesis եւ Triesis իրրեւ կիսվեր, Bémollette եւ Bémolon իրրեւ կիսվար): Բառերը գրուած են հայերէն ու հայերէն արտասանութեամբ լատինական տառերով:

Մեծ. Հայրը Աւագ Ուրբաթու այս Համբարձին շատերուն մատչելի եւ ըմբռնելի դարձնելու համար, իրրեւ Նախագիտելիք՝ երգին սկիզբը դրած է մասնագիտական կարեւոր ուսումնասիրութիւն մը հայերէն եւ Փրանսերէն լեզուներով, ուր հետեւեալ յայտնութիւնները կ'ընէ:

«Եկայի Հաւատացեալք» ի բառերուն հեղինակ կը նկատուի Ս. Սահակ Պարթեւ, իսկ եղանակը հին ու նոր խմբագրութիւն ունեցած է, որոնց առաջինը կորսուած է եւ կը գտնուի միայն խաղերու մեռեալ նշաններուն տակ: Նոր խմբագրութիւնը — ներկայ հրատարակուած ձեւին մէջ — կատարած է անցեալ դարու հայ երաժիշտ նշանաւոր դէմք մը՝ Տիրացու Պապա Համբարձում Լիմոն-

ճեան (1768—1839), որուն խաղաղած բնազիրը նոյնպէս կորսուած է. բայց շնորհիւ Վենետիկցի երկու Միլիթարեան Հայրերու — որոնք Լիմոնճեանի աշակերտները կը նկատուին — բերանացի՝ աւանդաբար հազարուած ու պահուած է ի Ս. Ղազար, զոր ի վերջոյ աղաւաղումի վտանգէն փրկելու համար ձայնագրած է Հ. Ղ. Տայեան: «Նկայք»ը, որ բացառաբար ԳՁ-ի վրայ առնուած Ստեղծ մը կը կարծուի, «Նոյակապ արժէքը կ'առնէ՝ իր ներքին նրբարուեստ հիւսուածքէն», ուր բառերու իմաստին խորութիւնն ու վսեմութիւնը, «ճարտարօրէն» արտայայտուած են խաղերով. եւ իբրեւ այսպիսի «ազգային շրջանակներէ դատ, արժանացած է նաեւ եւրոպացի քաջ երաժշտագէտներու... մասնայատուկ գնահատանքին ու գմայլման», ինչպէս կը գրէ հրատարակիչ Հայրը:

«Նկայք»ի եղանակին մէջ տեսնուած ամէնէն ուշագրաւ կէտը սակայն՝ քառորդ ձայնի ներկայութեան գաղտնիքն է, որուն առաջին անգամ անդրադառնալով Հ. Տայեան՝ հիմնած է իր դրութիւնը՝ նկատմամբ հայ եկեղեցական երգերու եւ արեւելեան երաժշտութեան: Քառորդ ձայնի այդ կիրարկումը մեր ազգային երգերու մէջ՝ ա՛յնքան կարեւոր կը նկատէ, որ առանց անոր՝ երգերը իրենց «ստարկայական եւ իսկական արտայայտութենէն» զուրկ կը համարի, եւ թէ ա՛յդ է նոյնպէս «արեւելեան հին ազգերու բնիկ նկարագրի պահանջը»: Այս նկատմամբ իրեն կարծեկից ունի նաեւ Հոովմայ արքունի Համալսարանի ուսուցչապետ Baglioni, որ ինքնին նոյնպէս հնարիչ ու ջատագով բարձր գործը ձայններու դրութեան, մեծապէս կը գնահատէ Հ. Տայեանի կարծիքը:

Այս է «Նախագիտելիք»ի հակիրճ բովանդակութիւնը, որուն կցուած է Փրանսերէն թարգմանութիւնը: Վերջին էջին վրայ կը գտնուին հայերէն բնագրին՝ Փրանսերէն, լատիներէն եւ իտալերէն թարգմանութիւնները:

Որքան ալ շահեկան թուի քառորդ ձայնի ներմուծումը մեր եղանակներուն մէջ, կան սակայն կարգ մը հարցեր, որոնք լուրջ խորհրդածութեան նիւթ կը մատակարարեն: Մեծ. Հայրը իր այդ գիւտը կը հիմնէ՝ դարձ մը ի վեր բերանացի աւանդութեամբ երգուած մեղեդիի մը վրայ. սակէ անմիջակափորձն կը յառնէ այս հարցը. Քառորդ ձայնի

դոյութիւնը կարելի՞ է առարկայական ստուգաբեամբ ընդունիլ՝ երգի մը համար, որ դար մը շարունակ բերնէ բերան աւանդութեամբ հազարուած է, նախ այն պատճառաւ, որ երկու տարբեր երգիչներ՝ ելեւէջային նրբութիւններու նկատմամբ նոյն երգին մէջ յաճախ կը տարբերին իրարմէ, միշտ իրենց ենթակայէն բան մը դնելով մէջը: Հետեւաբար, դար մը շարունակ դանդաղ երգողներու բերնէն անցած այս երգը՝ կրնա՞յ ամէն մասամբ անաղարտ մնացած նկատուիլ, մանաւանդ երբ խնդիրը քառորդ ձայններու մասին է, որոնք այնքան մէտ են փոփոխուելու: Երկրորդ՝ «Նկայք»ի նոյն ինքն հեղինակը — Պապա Համբարձում — քառորդ ձայնի դադարարին ծանօթութիւնն ունէ՞ր՝ իր ստեղծիչ յորինած պահուն...:

Ուրիշ հարց մըն ալ կը ծագի եղանակներու էութեան. Արդեօք երգի ամէն տեսակներուն (յորդորակ, ստողողի եւն) մէջ անհրաժեշտ է փնտռել ու գործածել քառորդ ձայնը: Կը կարծենք թէ ո՛չ. վասն զի աշխոյժ կամ ընթացիկ երգերու մէջ՝ քառորդ ձայնի թողած տպաւորութիւնը մեղի ազդեցութիւն մը պիտի գործէ:

Ասոնք ենթակայական խորհրդածութիւններ են, զորոնք կը կատարենք պարզապէս աւելի՛ ճշգրտութեամբ քառորդ ձայնի դիրքն ու կարեւորութեան աստիճանը մեր կամ առհասարակ արեւելեան երաժշտութեան մէջ: Եւ քանի որ մեծ. Հայրը կը խոստանայ «ասոնց եւ այլ տեսական օրէնքներու վրայ մանրամասն խօսիլ» իր «Հայ. Եկեղ. Ութ-Ձայնի նոր Դասագրքին» մէջ, յուսալից կը սպասենք վերջնոյս հրատարակութեան, որ ինչպէս ներկայ համառօտ հրատարակութիւնը կը խոստանայ՝ սահմանուած է կարեւոր յայտնութիւններ զործելու մեր ազգային երաժշտութեան մէջ:

Հ. ԳՐԻԳՈՐ ՀԵՊՈՅԵԱՆ



Վ Ի Ն Ն Ա, Մ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն



- Հ. Յ. Վ. Մարգարեան: Վենետիկ 1931, էջ 256:
- Գալիկեան Հ., Ամուսնութիւն եւ ընտանիքի իրաւունք: Երեւան, Կուսհրատ, 1933: 8°, էջ 148: Գինն՝ 1.20 ռ.:
- Գեղարքունի Գ., Թօշնակէն վերջ. վէպ: Պարիս 1934: 8°, էջ 150: Գինն՝ 10 Փր.:
- Հրտ. Հրանտ Սամուէլ Գրատան:
- Գնեղովսկի Վ. Ի., Շինարական նիւթեր, յատկութիւնները, փորձարկումը եւ պահպանումը: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 312: Գինն՝ 3 ռ.:
- Գուրվից Ո., Երկրաչափութեան սիստեմատիկ դասընթացք. միջնակարգ դպրոցի դասագիրք. Ա. մաս. Հարթաչափութիւն: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 364: Գինն՝ 3 ռ.:
- Գալիկեան Եղ., Ընտանի կենդանիների Փասցիւղը եւ պայքարը նրա դէմ (քափանակ): Երեւան, Գիւղհրատ, 1934: 8°, էջ 24: Գինն՝ 40 կ.:
- Գեմեան Բեդի, Ոտանաւոր եւ առակներ: Երեւան 1934: 8°, էջ 28: Գինն՝ 20 կ.:
- (Պետհրատի էժանագին դրադարան Թ. 3.)
- Գուրգարեան Մ., Լազերում: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 128: Գինն՝ 1.50 ռ.:
- Երաժշտական քրիստոմատիա. Ա. պրակ (կլասիկներ). Մոյարտ, Բեթհովէն, Շոբերտ, Շոման: Կազմեցին՝ Ս. Մելիքեան, Յ. Յարութիւնեան, Ս. Գասպարեան: Երեւան, Պետհրատ, 1933: 4°, էջ 52: Գինն՝ 5 ռ.: Պատկերազարդ, ձայնագրութեամբ:
- Զաքարեան Կ., Երկու Պիէս դաշնամուրի համար: Երեւան, Պետհրատ, 1933, էջ 6: Գինն՝ 1 ռ.:
- Զգոն Մ., Աշնան ծաղիկներ: Սոֆիա 1933: 8°, էջ 80: Գինն՝ 10 լէվ:
- Եղիկեան Գ., Յիշողութիւն. 1. Յիշողութեան հոգեբանութիւն. 2. Յիշողութեան կրթութիւն: Երեւան, Պետհրատ, 1934: 8°, էջ 96: Գինն՝ 1.50 ռ.:
- Թումանեան Յովհ., Պոէմներ: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 76: Գինն՝ 35 կ.:
- (Պետհրատի էժանագին դրադարան Թ. 1—2.)
- Լեմին Վ. Ի., Նամակներ հարազատներին: Երեւան, Կուսակցական հրատարակչութիւն, 1934: 8°, էջ 146: Գինն՝ 2 ռ.:
- Ընտիր Երկիր, հար. Գ: Երեւան, Կուսակցական հրատարակչութիւն, 1933: 8°, էջ 1002:

- Լեվիտան Բ., Հանարակազիտութիւն, դասագիրք տարրական եւ միջնակարգ դպրոցի համար: Բ. մաս: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 284: Գինն՝ 2.20 ռ.:
- Խանջեան Ա., Գիւղի սոցիալիստական վերակառուցման հիմնական խնդիրները: Երեւան, Գիւղհրատ, 1934: 8°, էջ 40: Գինն՝ 30 կ.:
- Սորհրդային Հայաստանը սոցիալիզմի կառուցման ուղիներով: Երեւան, Կուսհրատ, 1934: 8°, էջ 124: Գինն՝ 1 ռ.:
- Խաչատրեան Սրն, Ձերմոցներ: Երեւան, Գիւղհրատ, 1934: 8°, էջ 28: Գինն՝ 40 կ.:
- Կարպինսկի Վ., Չրոյցներ Լենինի դիմացին: Երեւան, Կուսհրատ, 1933: 8°, էջ 272: Գինն՝ 2 ռ.:
- Կիպրոսով Ն. Ա., Բալանային հաշուառման տարրական դասընթաց: Ա. պրակ: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 80:
- Կոն Ֆելիքս, Յեղափոխութեան դրօշի տակ: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 202: Գինն՝ 2 ռ.:
- Հայաստանի սպառողական կոոպերացիայի Զ. լիազօրական համադումարի առաջադրանքները: Երեւան, Հայկոոպ, 1934: 8°, էջ 34:
- Հետեւակի տակտիկական պատրաստութեան մեթոդիկան: Գլուխ Ա. Մարտիկի պատրաստութիւնը: Երեւան, Պետհրատ, 1933: 8°, էջ 112: Գինն՝ 80 կ.:
- Հետեւակի տակտիկական պատրաստութեան մեթոդիկա: Մաս Բ. Հրաձգային զնդի մասնագիտական ստորաբաժանումները տակտիկական խնդիրները: Երեւան, Պետհրատ, 1934: 8°, էջ 96: Գինն՝ 60 կոպ.:
- Հէմրի, Հայկական մենշեվիզմի ժամանակակից փիլիսոփայութիւնը: Երեւան, Կուսհրատ, 1934: 8°, էջ 68: Գինն՝ 60 կոպ.:
- Հրահանգ ոչխարների մատղաշների աճեցման մասին: Երեւան, Գիւղհրատ, 1933: 8°, էջ 22: Գինն՝ 30 կ.:
- Ճեպէնեան Տաք. Ա. Յ., Ժառանգականութեան նորավէպը: Հալէպ 1934: 8°, էջ 304:
- Մագմանեան Մարտ., Նոր երգարան: Երեւան, Պետհրատ, 1934: 16°, էջ 150:
- Մամիկոնեան Մ., Լիցքային վարժութիւններ: Երեւան, Պետհրատ, 1934: 8°, էջ 36: Գինն՝ 25 կ.:
- Մանուէլեան-Գալիկեան Ս., Նախադպրոցական երգեր, խմբագրեց Մարտ. Մագմանեան: